Հաստատում եմ
Տնօրեն՝ Ն. Հակոբյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024

Ուսումնական աշխատանքների գծով
փոխտնօրեն՝ Լ. Գրիգորյան
ԴԱԿ՝ Ռ. Հակոբյան

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:Դպրոցում իրականացվող յուրաքանչյուր միջոցառում սովորողների համար պետք է լինի ցանկալի ,դաստիարակող (ծննդյան օրեր,հանդեսներ, տոնական օրեր ,ընթերցումներ ,սպորտային միջոցառումներ , բանավեճեր և այլն):Դպրոցում ստեղծում ենք աշակերտական խորհուրդներ ,որոնք կմասնակցեն կազմակերպվող բոլոր միջոցառումների նախապատրաստմանը և անցկացմանը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:

2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:

3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը:

4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասղեկների հետ տարվող աշխատանք:

2. Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:

3. Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

4. Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

5. Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ):

6. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:

7. Գրադարանի և դպրոցում գործող թերթ խմբագրության հետ տարվող աշխատանքներ:

8. Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման, ռազմահայրենասիրության, գեղագիտական դաստիարակության, ֆիզիկական դաստիարակության, ազգային դաստիարակության ուղղություններով տարվող աշխատանքներ:

9 • Աշխատանք ծնողների հետ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

Հ/հ	Աշխատանքի բովանդակություն	ժամանակ	Կատարող
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ		
1	«Գիտելիքի և դպրության օր» տոնակատարություն։ Տեղավորել աշակերտներին իրենց դասասենյակներում ըստ կանոնակարգի։ Կազմակերպված անցկացնել առաջին դասը Կազմել հերթապահություն։	01.09.2023թ •	ԴԱԿ փոխտնօրեն ԴԱԿ տնօրինություն
2	Ստուգել հաճախումները, պարզել բացակայությունների պատճառը։ Հետևել, որ աշակերտները հագնվեն կոկիկ։	պարբերաբար	ԴԱԿ փոխտնօրեն
3	Դասարաններում ստուգել սանիտարական վիճակը։		ԴԱԿ
4	Անցկացնել աշակերտական, դասարանական ժողովներ։ 1.Ընտրել դասարանական և աշակերտական խորդի նախագահ և անդամներ 2 .Կազմել աշակերտական հերթապահություն։	04 • 09 • 2023 15 • 09 • 2023	ԴԱԿ փոխտնօրեն
5	Օգնել դասարան- աշակերտական կոլեկտիվին աշխատանքների կազմակերպման գործում։	06 • 09 • 2023	ԴԱԿ փոխտնօրեն
6	Հետևել այն աշակերտների վարքագծին որոնք անուշադիր են դասաժամերին, անկարգապահ են, անփույթ և անհոգ են ուսման նկատմամ՝ 1-4 րդ դաս. Կազմակերպել ընթերցանության մրցույթներ /Կարդացած գրքերի քննարկում/	դիտարկում կատարել ամեն ամսվա վերջին շաբաթում	ԴԱԿ փոխտնօրեն
7	Կազմակերպել աշխատանք դժվար դաստիարակվող և ԱՈՒՊ ունեցող աշակերտների հետ, նրանց ընդգրկել համադպրոցական միջոցառումներին։	Սեպտեմբեր 21 Հոկտեմբեր 5	ԴԱԿ փոխտնօրեն
8	Ակտիվ մասնակցություն ցուցաբերել դպրոցում գործող «1+1» մարզային դպրոցական թերթի լուսաբանման գործընթացին Պատրաստել պատի թերթեր։ 5-9րդ դասարան։ Մասնակցել դպրոցում գրադարանի և ընթերցասրահի բացման և կահավորման գործընթացին	Սեպտեմբեր 10 • 09 • -18 • 09	ԴԱԿ փոխտնօրեն
9	Հանձնարարել աշակերտներին պատրաստել պատի թերթեր նվիրված Անկախության 32 ամյակին, ուսուցչի տոնին և այլ	Սեպտեմբեր 15 Հոկտեմբեր 2	դասղեկներ ԱԽ

	համապատասխան թեմատիկաներով:		
10	Հետևել աշակերտների հերթապահությանը դպրոցում:	շաբաթը մեկ անգամ	
11	Դասապրոցեսում դաստիարակչական միջոցների կիրառումը ստուգելու նպատակով դասեր լսել 5-9րդ դասարաններում հետևելով, թե դաստիարակչական ինչպիսի մեթոդներ են կիրառվում դասապրոցեսում:	01 • 11 • 2023 30 • 11 • 2023	
12	Բարձրացնել սովորողների բարոյահոգեբանական պատրաստվածությունը, ինքնուրույն աշխատանք տանել, նրանց մոտ ձևավորել գիտակցված պահանջմունք աշխատանքի նկատմամբ:	01 • 09 • 2023 30 • 11 • 2023	
	Իրազեկել և կազմակերպել տեսական, գործնական միջոցառումներ ԱՌՆ-Ի հետ: Կազմակերպել քաղպաշտպանության դասեր	01 • 11 • 2023 20 • 12 • 2023	
	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ		
1	Միջդասարանային մրցույթներ՝		
2	Մասնակցել գրադարանում ստեղծված աջակիցների խորհրդի աշխատանքներին:	01 • 09 • 2023 26 • 05 • 2024	
3	Հետևել դպրոցում գործող արտադասարանական խմբակներին	02 • 10 • 2023 20 • 12 • 2023	
7	Անցկացնել զրույցներ և դասղեկի ժամեր 1. Գիտելիքի և դպրության օր- Սեպտեմբերի 1	Համապատասխան օրերի	
	2. ՀՀ անկախություն- Սեպտեմբերի 21: • 44 օրյա պատերազմը և նրա թողած հետևանքները		
	3. Ուսուցչի օր- Հոկտեմբերի 5:		
	4. 1988թ երկրաշարժի օր- Դեկտեմբերի 7:		
	5 • Հայոց բանակ		
	6 • Տերնդ առաջ Գիրքը մեր լավ բարեկամն է Մեր մեծերը շարքից / Թումանյան, Չարենց----/ « 1+1» թերթը 5 տարեկան է		
	7 • Մայրության և գեղեցկության տոն		

	8 • Ապրիլը և հայ ժողովուրդը • Ծիծաղենք միասին		
	9. Ընտանիքի միջազգային օր • Մայիսյան հերոսամարտեր		
	Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության օրն է Ընթերցանությունը և մենք		
8	Հաշվառել կարիքավոր և ծնողազուրկ սովորողներին՝ հնարավորության սահմաններում օգնություն կազմակերպելու նպատակով:	01,09 • 2023- 30 • 09 • 2023	
9	Հետևել աշակերտների հաճախելիությունը <<Արմաթ>> լաբորատորիայի պարապմունքներին:	շաբաթը մեկ անգամ	
10	Հետևել ԱԽ նիստերին	**ամիսը մեկ անգամ**	
	ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	***Խթանել աշակերտների ինքնուրույնությանը և ազատ ստեղծագործությանը:*** Այդ նպատակով կազմակերպել և անցկացնել՝ 1. Սովորողների ինքնագործունեության միջդասարանային մրցույթ- ստուգատես:	01 • 02 • 2024 20 • 02 • 2024	
	2. Դպրոցական շենքի ներքին և արտաքին ձևավորում	~~20 • 08 • 2023~~ 10 • 09 • 2023	
	3 .Պատրաստել թեմատիկ վահանակներ, պատի թերթեր՝ արժեքավոր գործերի լուսաբանմամբ:	20 • 08 • 2023 10 • 09 • 2023 15 • 09 • 2023	
	4 Ովքեր ենք մենք, և որն է մեր սկիզբը:	~~30 • 11 2023~~	
2	Կազմակերպել զրույցներ և դասախոսություններ, ֆիլմերի դիտում հետևյալ թեմաներով՝ 1 • Հայրենիքը և նրա պաշտպանությունը:	20 • 01 • 2024 01 • 02 • 2024	ԴԱԿ փոխտնօրեն, պատմ ուսուցիչ զինղեկ
	2 • Հայ ազգային հերոսներ:		
	ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	**1. Սովորողների մոտ մշակել գեղեցիկը կյանքում տեսնելու և գնահատելու, ինչպես նաև պահպանելու կարողություններ:** Այդ նպատակով կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ՝ զրույցներ, քննարկումներ, վիկտորինաներ, մրցույթներ, տոներ: - Մարդու արտաքին և ներքին	18 • 09 • 2023 25 • 10 • 2023	ԴԱԿ, փոխտնօրեն, դասղեկներ, դասվարներ,

	գեղեցկությունը: -Գեղեցիկ արտաքի՞ն, թե՞ հարուստ ու գեղեցիկ ներաշխարհ; - Ինչպե՞ս դառնալ գեղեցիկ և հմայիչ: Մրցույթ՝ -Հագնվել գեղեցիկ և ճաշակով: -Գեղեցիկ ձևավորված պատի թերթ: -Գեղեցիկ ձևավորված արվեստի գործ՝ նկար, ծեփ, քանդակ, ասեղնագործություն և այլն: 2. ***Երեխաների համար բացահայտել բնության գեղեցկությունները և նրանց ծանոթացնել բնապահպանական կանաններին, ձևավորել բնության և նրա գեղեցիկ ու զողտրիկ անկյունների նկատմամբ հոգատար վերաբերմունք:*** Իրականցնել զրույցների, էքսկուրսիաների, գեղագիտական այլ բնույթի միջոցառումների, շարադրությունների միջոցով: Երգեր և տոներ նվիրված բնության ու գեղեցկությանը կազմակերպել ցուցահանդեսներ: • Օգնենք փետրավոր բարեկամներին: • <<Մեր փոքրիկ բարեկամները>> ընտանի կենդանիներ: • Ծաղիկների տոն: • Բեմականցում՝ <<Ծաղիկների երգը>>: Բնությունը իմ աչքերով-նկարների ցուցահանդես ➢ ***ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՀԵՏԵՅԱԼ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝*** 1. Վարվեցողություն և կուլտուրա:		
	2. Անձնական հիգիենիա:		
	3 .Գեղեցիկը և գեղեցիկի ընկալման դաստիարակությունը:		
2	Կազմակերպել կոլեկտիվ կինոդիտումներ, թատերական և տիկնիկային դիտումներ:	08 • 12 • 2023 22 • 03 • 2024	ԴԱԿ, տնօրինություն
3	Կազմակերպել պատանի նկարիչների ցուցահանդես:	13 • 11 • 2023 11 • 12 • 2023	ԴԱԿ,դասվարներ
4	Կազմակերպել հանդիում «1+1» դպրոցական թերթի, «Գեղամա աշխարհը» թերթի խմբագիրների հետ	01 • 02 • 2024 28 • 02 • 2024	ԴԱԿ

	ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	Կազմակերպել և անցկացնել զրույցներ հայ ժողովրդի ազատագրական շարժման հերոսներ՝ Մոնթե Մելքոնյան, Լիոնիդ Ազգալդյան, Գարեգին Նժդեհ, Խրիմյան Հայրիկ, Արկադի Տեր-Թադևոսյան/Կոմանդոս/ թեմաներով:	03 • 04 • 2024 28 • 05 • 2024	ԴԱԿ, փոխտնօրեն, պատմ ուսու:
2	Զինվորը կռվում է վասն Հայրենյաց, վասն հավատով:	01 • 30 • 2024 30 • 01 • 2024	ԴԱԿ, պատմ ուսու:
3	Կազմակերպել և անցկացնել զրույց «Արցախը և մենք» թեմայով:	10 • 11 • 2023	ԴԱԿ, փոխտնօրեն, պատմ ուսու
4	ա/ Աշխատանք տանել դպրոցականների հոգեբանական պատրաստվածության ուղղությամբ, որի հիման վրա ձևավորել մարտական որակները՝ կամք, մտածելակերպ, արիություն, տոկունություն և այլն: Այդ նպատակով կազմակերպել զրույցներ, բանավեճեր, մրցույթներ, սպորտլանդիաներ, արշավներ: բ/ Բարձր դասարանցիներին պատրաստել ազգային բանակում ծառայելու, նրանց մեջ մշակել կարողություններ և իմացություններ ՀՀ պաշտպանական համակարգում ակտիվ գործունեություն ծավալելու, հայրենիքին ծառայելու համար: 1. Համագործակցել <<Ռազմագիտություն>> կամ <<Նախնական զինվորական պատրաստություն>> դասավանդող ուսուցչի հետ և ապահովել այդ դասերի բարձր արդյունավետությունը: 2. Հայրենիքի ապագա զինվորին սովորեցնել ու դաստիարակել ոչ միայն որպես ռազմական գիտելիքների պաշար կրողի, այլև հաղորդակից դարձնել ազգային և համազգային արժեքներին, կրթել նրանց և օժտել մտավոր, հոգևոր և ֆիզիկական ներուժով: **Զրույցներ՝** 1. Հաստատուն պահենք մեր երկրի ու ժողովրդի անդորրը: 2. Կայուն ռազմական գիտելիքները հայրենասերի սուր զենքն է: **3.** Մայրերի ափի մեջ պիտ փնտրել ազգերի ճակատագիրը: **/Գ. Նժդեհ/** գ/ Դպրոցականներին իրազեկել հայ ժողովրդի անվի նշանավոր պետական գործիչների, գիտության և մ մշակույթի փառաբանված ներկայացուցիչների,նշանավոր	ամիսը մեկ անգամ	

	զորահրամանատարների կյանքին և գործունեությանը: Տարբեր զրույցների և միջոցառումների միջոցով աշակերտներին ծանոթացնել Հայաստանի ազգային հերոսների, արցախյան հերոսամարտի առաջնորդների և նահատակների անցած ուղուն: Արձագանքել տարվա հիշարժան տոներին, կազմակերպելով համապատասխան միջոցառումներ, լույս ընծայել պատի թերթեր, Նշել-Հայկական բանակի օրը՝ 28/01 - Հաղթանակի օրը՝ 9/05 - Հայաստանի առաջին հանրապետության օրը՝ - 28/05 -Անկախության օրը՝ 21/09 9. Նախընտրելի են զրույցներ կամ դասախոսություններ հետևյալ թեմաներով՝ 1. Ավագ սերնդի հերոսական սխրագործությունները օրինակ են երիտասարդության համար: 2. Երիտասարդության մարտական սխրագործությունները արցախյան գոյամարտում: 3. Հայ և օտար ազգի աղբյուրները հայ զինվորների բարձր մարտունակության մասին: 10. Աշակերտներին ծանոթացնել նաև ռազմահայրենասիրական վիպագրությանը, որը կլինի գրականության, պատմության ուսուցիչների և դպրոցի գրադարանավարի մեծագույն նվաճումը և արժեքավոր ավանդը, իսկ համապատասխան գրքերի հերոսների կերպարների վերլուծությունը կնպաստի երեխաների մեջ բարոյական իդեալի ձևավորմանը: 11.Տեղին և ժամանակին կազմակերպել անվտանգ կենսագործունեությանն ուղղված միջոցառումները՝ զրույցներ, դասախոսություններ, տարհանումներ՝ Զրույցներ. 1.Բնական աղետները և մենք 2.Երկրաշարժը, ավերածությունները, ինչպես պաշտպանվել դրանցից 3. Հրդեհներ 4.Ջրհեղեղներ	01 • 12 • 2023 20 • 12 • 2023	
	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
	1. Ապահովել դպրոցականների ներդաշնակ ֆիզիկական զարգացումը: 2. Ֆիզկուլտուրայի ուսուցիչների օգնությամբ կազմակերպել մարզական միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն սովորողների ֆիզիկական զարգացմանը, առողջության ամրապնդմանը, օրգանիզմի կոփմանը, ինչպես նաև կնպաստեն բարոյական բարձր հատկանիշների	յուրաքանչյուր ամսվա 2-րդ շաբաթում	ԴԱԿ, փոխտնօրեն, ֆիզկուլտուսու:

	դաստիարակմանը: 3. Անցկացնել սպորտլանդիաներ, դասարանների միջև տարբեր խաղային մրցումներ, որոնք կզարգացնեն երեխաների շարժողական հատկությունները. Համատեղ գործելու, փոխօգնության հմտությունները, կձևավորեն պատասխանատվության, ազնվության, կարգապահության, զսպվածության և այլ կամային որակներ: 4. Անցկացնել առողջության և սպորտի օրեր, ինչպես նաև համապատասխան զրույցներ. ա.«Առողջ մարմնում առողջ հոգի» բ.«Ինչպե՞ս անել, որ չհիվանդանալ» գ.«Օրվա ռեժիմը և առողջությունը» դ.«Անձնական հիգենա»	դիտարկումներ կատարել ամսվա ընթացքում	
	5. Ուշադրություն դարձնել և կանոնակարգել դպրոցական արձակուրդների ընթացքում իրականացվող մարզական միջոցառումները: 6. Ապահովել դպրոցի աշակերտների մասնակցությունը մարզային և հանրապետական մրցումներին՝ դրանց նախապատրաստման համար ստեղծել համապատասխան արդյունավետ և անհրաժեշտ պայմաններ:		
	7. Հետևողականություն հանդես բերել շախմատի ուսուցման գործընթացին, ստեղծել հատուկ խմբակներ և աշխատել ապահովել աշակերտների մասնակցությունը մարզային, տարածքային, հանրապետական համապատասխան մրցաշարերեին: 8. Ուշադրության կենտրոնում ունենալ ներառական կրթությանը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հոգևոր և ֆիզիկական դաստիարակությանը: Նրանց հետ կազմակերպել յուրահատուկ միջոցառումներ զրույցներ. 1 • «Վստահիր քո ուժերին» 2 • «Դու մեր հասարակության լիիրավ անդամն ես»		
	ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	Անցկացնել զրույցներ<< Եկեղեցական ծեսեր>> թեմայով:	10 • 02 • 2024 14 • 02 • 2024	ԴԱԿ,հայ եկ. պատմ ուսուցիչ
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	Կազմակերպել և անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով՝		

	ա/ Շրջակա միջավայրը և նրա պահպանումը։ բ/ Բնությունը և մարդը փոխկապակցությունը։ գ/ Էկոլոգիայի նշանակությունը ժողովրդի տնտեսության տարբեր ճյուղերում։ դ/ Շրջապատող բնությունը և կենդանիների պահպանումը;	04 • 04 • 2024 3-30 • 05 • 2024	ԴԱԿ, փոխտնօրեն ԴԱԿ, փոխտնօրեն ԴԱԿ, փոխտնօրեն ԴԱԿ, փոխտնօրեն
2	Մեր բնակավայրը և նրա պատմությունը։	Ապրիլ-18	ԴԱԿ, փոխտնօրեն
	ԳԱՂԱՓԱՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	Անցկացնել բանավեճեր 5-9րդ դաս։ 1 Հայրենասիրություն և դեմոկրատիա։ 2 Իմ հասակակիցը արտասահմանում։ 3 Արցախյան գոյամարտ։ 4 Սփյուռք-հայրենիք» 5 Իմ մայրենի լեզուն /Թումանյանական շաբաթ/	01 • 09 • -20 • 11 • 2023 Փետրվար 10-30	ԴԱԿ, փոխտնօրեն, պատմ ուսուցչ
	Մենք ենք կերտում մեր ապագան	հունվար 15-20	
	ԻՐԱՎԱ-ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		
1	Անցկացնել զրույց << Հանցագործ չեն ծնվում, հանցագործ դառնում են>>։	դեկտեմբեր 10	ԴԱԿ, փոխտնօրեն, զինղեկ
2	Զրուցել աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին։	ապրիլի 16	ԴԱԿ,
3	Անցկացնել զրույց և մրցույթ կազմակերպել <<Ճանապարհային երթևեկության կանոնները>> թեմայով։	սեպտեմբեր 26	ԴԱԿ, փոխտնօրեն, զինղեկ
	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել բարոյա-իրավական թեմաներով հետևյալ զրույց-զեկուցումը՝ 1.Ինչպես դաստիարակել և ամրապնդել պատասխանատվության զգացումը։ 2. Կարգապահ մարդը կատարում է իր պարտքը ժողովրդի և իր հայրենիքի հանդեպ։ 3. Հանցագործությունը ոչ միայն դիտավորյալ այլև անզգույշ գործողություն է։	Ամիսվա վերջին շաբաթը	ԴԱԿ, փոխտնօրեն, զինղեկ ԴԱԿ, փոխտնօրեն, զինղեկ հասարակագիտության ուսուցիչ
	Կազմակերպել հանդիպումներ ՆԳ բաժնի անչափահասների տեսչության աշխատակիցների հետ։ Անցկացնել հարց ու	սեպտեմբերի վերջին շաբաթը	

	պատասխան:		
	ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ		
	1.Կազմակերպել դպրոցի աշակերտական խորհրդի և նրա անդամների ընտրությունը, ինչպես նաև հանձնախմբերի և նրանց ղեկավարների ընտրությունը: 2.Օգնել աշակերտական խորհրդին պլանավորելու նոր ուսումնական տարվա աշխատանքները, կազմել համալիր ծրագիր և դնել խորհրդի անդամների քննարկմանը: 3.Աշակերտական խորհրդում ունենալ հետևյալ հանձնախմբերը. ա) ՈՒսումնական բ) Կարգապահական գ) Սպորտային դ) Կուլտ-մասսայական(միջոցառումներ-խմբկոլ) ե) Սանիտարական 5. Կազմակերպել աշակերտական խորհրդի աշխատանքները, ապահովելով նրա գործունեությունը դպրոցի ներքին աշխատանքին ա) Միասնական կոլեկտիվի ստեղծում: բ) Մասնակցություն կրթության և դաստիարակության գործին: գ) Աշակերտական հերթապահություն: 6. Աշակերտական խորհրդի նիստում լսել դասարանների առաջադիմության հարցեր:	06 • 09 • 2023- 25 • 09 • 2023	ԴԱԿ, աշակերտական խորհուրդ
	1. Կազմակերպել միջդասարանային մրցույթներ՝ ա) Լավագույ դասասաենյակ բ) Լավագույն շարադրություն գ) Լավագույ ձեռագիր և նկար 8. Հետևել, որպեսզի աշակերտների ուժերով լույս տեսնեն պատի թերթեր, 9. ՈՒշադրության կենտրոնում պահել ստեղծագործող և շնորհալի աշակերտներին, բացահայտել նրանց և խրախուսել լավագույններին:	20 • 11 • 2023- 20 • 12 • 2023	

	10.Աշակերտական ուսումնական հանձնախմբում լսել ետ մնացող աշակերտների հարցերը, կազմակերպել ընկերական փոխօգնություն: 11. Կազմակերպել շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքները ներկայացնող ցուցահանդեսներ, լավագույնները ներկայացնել մարզային և հանրապետական մրցումներին: 12. Պատշաճ մակարդակով կազմակերպել աշակերտների հանգիստը և ժամանցը:	10 • 02 • 2024- 10 • 03 • 2024	
	ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ		
	1. Ապահովել ծնողների սերտ կապը դպրոցի հետ՝ հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ (համադպրոցական և դասարանային), որտեղ ծնողներին ծանոթացնել դպրոցում կազմակերպվող ուսումնա- դաստիարակչական աշխատանքներին, դպրոցի առաջադիմությանը, ծնողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունքներին ու անելիքներին: 2. Հատուկ ուշադրություն դարձնել ետ մանացող, վարքի շեղումներ ունեցող, դժվար դաստիարակվող երեխաների ծնողների հետ տարվող աշխատանքներին, նրանց դպրոց հրավիրելու արտահերթ, զրուցել, այցելել նրանց ընտանիքները, պարզել երեխաների աշխատանքային պայմանները և միջոցառումներ մշակել նրանց օգնություն կազմակերպելու հարցում: 3. Ծնողների համար կազմակերպել զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, որոնք կօգնեն ճիշտ և համատեղ կազմակերպել երեխաների դաստիարակությունը: Թեմաներ՝ ա) Դաստիարակությունը սկսվում է ընտանիքից:	ամսվա վերջին շաբաթում	ԴԱԿ, Ծնողներ

	բ) Դեռահասի տարիքային առանձնահատկությունները: գ)Ընտանիքում է ձևավորվում մարդու անհատականությունը: դ) Ձեր երեխան դպրոցական է: ե) Տան ջերմությունը և ուշադրությունը: 4. Հատուկ ուշադրություն դարձնել դասարանական ծնողխորհուրդների աշխատանքին և աջակցել նրանց: 5. Հետևել դպրոցի ծնողական խորհրդի աշխատանքներին,կ ժամանակին կազմակերպել մեթոդական օգնությունը և հսկողությունը: 6. Տարբեր միջոցներով ուշեղացնել ծնող-դպրոց հանագործակցությունը և ծնողների ներգրավել դպրոցի տնտեսական, կենցաղային և այլ հարցերի կարգավորման աշխատանքներում: Դպրոցի ներքին գնահատմանը: 7. Օգտագործել ծնողների, ինչպես նաև համայնքի, հասարակական կազմակերպությունների և բարեգործական ֆոնդերի ներուժը՝ սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների պայմանները ուսումնասիրելիս և համապատասխան օգնություններ կազմակերպելիս:		